

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա **Պայքար կիրերհարձակման
և առցանց բռնության այլ ձևերի դեմ**

Առարկա **Ինֆորմատիկա**

Մասնակից **Երևանի հ. 181 հիմնական
դպրոցի Ինֆորմատիկայի ուսուցչուհի**

Մկոյան Գայանե

Ղեկավար **Վարդանուշ Հովհաննիսյան**

ԵՐԵՎԱՆ 2022թ.

Բովանդակություն

Ներածություն	3
Թեմայի կարևորությունն ու արդիականությունը.....	3
Հետազոտության հիմնական նպատակը.....	4
Հետազոտության խնդիրները.....	4
Պայքար կիրերհարձակման և առցանց բռնության այլ ձևերի դեմ	6
Կիրերբուլլինգ.....	8
Ի՞նչպես տարբերել բուլլինգը կատակից	8
Կիրերբուլլինգի ազդեցությունը	9
Ի՞նչ անել կիրերբուլլինգի դեպքում.....	9
Ինչո՞ւ է կարևոր դրա մասին խոսելը.....	9
Կիրերբռնության կանխում	10
Ապահով համացանց.....	11
Հակավիրուսային ծրագրեր	11
Գաղտնաբառ.....	12
Եւ նորից գաղտնաբառերի մասին	12
Քննատաղաբար պետք է մոտենալ համացանցի տեղեկատվությանը.....	13
Հետազոտության արդյունքներ	16
Եզրակացություններ.....	17
Առաջարկություններ.....	18
Հենց այսօր փոխել առցանց հաթակների կարգավորումները	18
Համացանցում երեխաների հետ միասին որոշակի ժամանակ անցկացնել.....	18
Երեխայի հետ միասին դիտել տեսանյութեր	19
Գրականության ցանկ	20

Ներածություն

Համացանցը հսկայածավալ ինֆորմացիոն տարածք է, որը միլիոնավոր մարդկանց հնարավորություն է տալիս համագործակցել: Համացանցը նույնիսկ պետական սահմաններ չի ճանաչում և փոխում է մարդկանց շփման, հաղորդակցման ու գործարարության ձևերը, ինչպես նաև ժամանցի կազմակերպման եղանակները: Այսինքն համացանցն էլ կյանք է՝ վիրտուալ միջավայրում և այնտեղ էլ կարող ենք հանդիպել լավ ու վատ երևույթների, բազմաթիվ վտանգների և բռնության: Ու եթե սովորական աշխարհում վտանգները շատ են, ապա թվային աշխարհում դրանք հազարապատիկ են, քանի որ թվային աշխարհը անսահման է ու հասանելի բոլորին: Եթե ընկերների հետ ուզում ենք ժամանակ անցկացնել, միևնույն ժամանակ պահելով անհրաժեշտ հեռավորությունը, ապա սոցիալական մեդիան հրաշալի տարբերակ է: Ցավոք, առավելություններ պարունակող այս նույն ասպեկտները կարող են նաև հանգեցնել այնպիսի վնասների, ինչպիսիք են անձնական կյանքի գաղտնիության կորուստը, ոտնձգությունները, կիրբերբռնության՝ առցանց հալածանքը (cyberbullying), և որոշ դեպքերում՝ ուղղակի իրական բռնությունը: Այս տեսակի ռիսկի են ենթարկվում հատկապես դպրոցահասակ երեխաները, ովքեր նոր են անցնում թվային անջրպետը: Այս ռիսկերը պետք է նվազագույնի հասցնել, որպեսզի հնարավոր լինի երեխաների համար անվտանգ ու հավասար հասանելիություն ապահովել, նրանք կարողանան օգտագործել թվային գործիքներ և անվտանգ օգտվել համացանցի ընձեռած անսահմանափակ հնարավորություններից:

Թեմայի կարևորությունն ու արդիականությունը

Հայաստանում կիրբերանվտանգության կարևորությունը թե՛ պետության, և թե՛ հասարակության կողմից, կարծես, գիտակցված չէ այնպես, ինչպես զարգացած երկրներում: Հասարակության գիտակցության մակարդակն այս հարցում պատկերացնելու համար բավարար է նշել միայն այն, որ Հայաստանում քաղաքացիների կողմից օգտագործվող համակարգիչների ծրագրային ապահովման 86%-ն արտոնագրված չէ: Թեև համակարգչային տեխնոլոգիաներն ակտիվ

տարածում են գտնում Հայաստանում: Այսօր Հայաստանյան օգտատերերի թվի աճին համընթաց աճում է նաև կիբեռահանցագործությունների քանակը:

Ըստ «Կասպերսկու լաբորատորիայի» տվյալների, 2016թ. Հայաստանի յուրաքանչյուր 3-րդ օգտատեր բախվել է կիբեռսպառնալիքի, այն էլ տարեկան միջինը 82 անգամ:¹ Այս առումով Հայաստանը փաստացի գտնվում է խոցելի պետությունների ցանկում: Խոցելիությունը պայմանավորված է նաև նրանով, որ կապի մալուխները երկու ելք ունեն, որոնք ճանապարհին անցնում են նաև Հայաստանի համար ոչ բարեկամ պետությունների՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի տարածքներով: Իսկ կիբեռանվտանգության ապահովման համընդհանուր քաղաքականության բացակայությունը կարող է ավելի խոցելի դարձնել երկրի ցանցային եւ տեղեկատվական համակարգերը: Թեև Հայաստանում կիբեռբռնության վերաբերյալ տվյալները սակավ են, սակայն ռիսկերը դեռևս բարձր են. բնակչության 83 տոկոսն ամեն օր օգտվում է ինտերնետից: Ուստի ինչպես ամբողջ աշխահարում այնպես էլ Հայաստանում այսօր առավել քան երբևէ արդիական է համացանցից անվտանգ օգտվելու խնդիրը:

Հետազոտության հիմնական նպատակը

Օգնել ավելի ապահով թվային տարածքների ստեղծման, տեղեկատվությունից անվտանգ ու արժանապատվորեն օգտվելու կարևոր գործում,

Նպաստել կիբեռբռնությունը հասկանալու, հայտնաբերելու, կանխելու դրան արձագանքելու դպրոցական ու ավելի փոքր տարիքի երեխաների, ինչպես նաև ծնողների համար գիտելիքների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Հետազոտության խնդիրները

Համացանի տեխնոլոգիան շատ արագ է զարգանում: Նոր ծառայությունները ներմուծվում են գրեթե յուրաքանչյուր օր: Այս ամենը ստեղծում է լրացուցիչ դժվարություններ համացանցի կառավարման բնագավառում, ինչն իր հերթին առաջացնում է տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների զարգացման լուրջ խնդիր՝ թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների շրջանակում: Այս խնդիրների բազմազանությունը ցույց տվեց, որ ճիշտ չէ այն կարծիքը, թե

¹ <https://ampop.am/cyber-security-issues-in-armenia/>

աշակերտները ավելի հմուտ են տեխնոլոգիաներից օգտվելու հարցում:
Ուսումնական նպատակով թվային սարքավորումներից օգտվելուն նրանք, բնավ,
պատրաստ չեին: Նույնը վերաբերում է նաև ուսուցիչներին: Անկախ նրանից, թե
աշակերտները դպրոցական դասարաններում են, թե՝ տանը, երեխաների հանդեպ
մեր հանձնառությունը նրանց հնարավորինս լավ կրթություն ապահովելն է:

Պայքար կիրքերհարձակման

և առցանց բռնության այլ ձևերի դեմ

Աշխարհում համակարգչային ցանցերի օգտագործումը և մեծ քանակությամբ արժեքավոր տեղեկությունների տեղադրումն այս ցանցում առավել քան երբևէ մեծացրել է համակարգչային ցանցերի ու համակարգիչների գրավչությունը: Թվային տեխնոլոգիաների և հեռավար դասերի հետ համատեղ առաջ է գալիս կիրքերանվտանգության՝ համացանցից անվտանգ օգտվելու խնդիրը: Երբ Կորոնավիրուսը բոլորիս փակել էր տանը ու ստիպված ապրում էինք առցանց կյանքով, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարներն անմիջապես հայտարարեցին, որ աշխարհն առերեսվում է ոչ միայն առողջապահական, այլ նաև՝ կրթական լուրջ ճգնաժամի հետ: Դա մարտահրավեր էր բոլորի համար՝ թե՛ ծնողների, թե՛ ուսուցիչների, թե՛ երիտասարդների, թե՛ դպրոցական ու թե՛ ավելի փոքր տարիքի երեխաների համար: Հեռավար կրթության անցման առաջին օրերին շատ մեծ էր ոգևորությունը և ուսուցիչները, ծնողները, երեխաները անմիջապես սկսեցին նկարներ տարածել, թե ինչպես են երեխաները առցանց դասին մասնակցում: Երեխաները նաև սկսեցին գրանցվել տարբեր հարթակներում՝ բացեիբաց տեղադրելով իրենց բոլոր անձնական տվյալները: Սա խնդիր է, որն առանձին կրթություն և տեղեկացվածություն է պահանջում: Վերոնշյալ իրավիճակի մասին իր մտահոգությունն է հայտնել դեռահասների հոգեբանության մասնագետ Լիզա Դամուրը (Dr. Lisa Damour), ով «Նյու Յորք Թայմս»-ի լավագույն վաճառք գրանցած գրքերի հեղինակ է: Նա խոսել է այն ամենի մասին, թե ինչ կարող է անել դեռահասը իր մասին հոգ տանելու և իր հոգեկան առողջությունը բարելավելու համար. «Ես երբեք չեմ թերագնահատի դեռահասների ստեղծագործ միտքը», - ասում է տկն. Դամուրը, - «նրանք հաստատ միմյանց հետ շփվելու այնպիսի առցանց տարբերակներ կգտնեն, որոնք կտարբերվեն մինչ այս ընդունված բոլոր ձևերից:

Ստեղծագործ եղե՛ք»:

«Բայց, էկրաններին անդադար կպած լինելը և առցանց սոցիալական հարթակներից դուրս չգալը նույնպես լավ գաղափար չէ: Դա ուղղակի առողջ և

խելամիտ չէ ու իրականում կարող է նույնիսկ խորացնել քո անհանգստությունը», - ավելացնում է տիկին Դամուրը՝ նշելով, որ ծնողների հետ պետք է գազեթներից օգտվելու ժամանակ սահմանել²:

Եվ ինչպես սովորական աշխարհում, այնպես էլ՝ թվային աշխարհում ծնողները պետք է ամեն ինչ անեն իրենց երեխաներին պաշտպանելու համար:

Պետք է ուշադիր և զգոն լինել, քանի որ այն, ինչի մասին խոսում ենք սոցիալական մեդիայի էջերում, այն, ինչ տարածում ենք, տեսնում են միլիոնավոր մարդիկ: Կրթական հարթակներից օգտվելու համար ամենևին պարտադիր չէ, որ երեխաները կամ երիտասարդները տարածեն իրենց նկարները կամ խիստ անձնական տվյալները: Պետք է իրազեկված լինենք լուրերի կեղծ լինելու հնարավորության մասին և օգտվենք միայն վստահելի աղբյուրներից: Օգտագործվող համակարգիչներում, հեռախոսներում հատուկ ծրագրեր է անհրաժեշտ տեղադրել, որոնք կօգնեն վերահսկել օգտատիրոջ թվային հետքը, հատկապես ավելի փոքր տարիքի երեխաների համար: Կարելի է միասին առցանց հարթակներ առանձնացնել, որտեղ յուրաքանչյուր տարիքին հարմար հավելվածներ, խաղեր և ժամանցի այլ հնարավորություններ կան: Կիրբերբուլիինգի դեպքում կամ ոչ հարիր բովանդակության հանդիպելու դեպքում, կօգնեն այն մեխանիզմները, որոնք կարող ենք օգտագործել երեխային պաշտպանելու համար: Հստակ **կանոններ սահմանելով**, թե երբ, որտեղ և որքան նրանք կարող են առցանց լինել կարող ենք համացանցում պաշտպանել երեխաների անվտանգությունը և նրանց անձնական տվյալները: Երեխաները իրենց փոքր տարիքի պատճառով, երբ դեռ գտնվում են ֆիզիկական և մտավոր զարգացման, իրավագիտակցության ձևավորման ճանապարհին, կարող են ամբողջությամբ չգիտակցել իրենց անձնական տվյալների կարևորությունը կամ գիտակցեն, սակայն չկարողանան պատշաճ կերպով պաշտպանել դրանք: Ուստի կարող ենք երեխաներին ծանոթացնել «անձնական տվյալներ» հասկացության հետ՝ օրինակներով ներկայացնելով դրա պաշտպանության կարևորությունը:

² «Ինչ սի՞նք ու դեռստիաները կարող են պաշտպանել իրենց հոգեկան առողջու՞թյունը...» - <https://uni.cf/3z5SDhP>

Հատկապես առցանց ուսուցման ժամանակ կիրառելով որոշ պարզ մոտեցումներ կստեղծենք առավել հարմարավետ պայմաններ:

Տանը առանձին սենյակ կամ տարածք առանձնացնենք, որտեղ ոչ ոք և ոչինչ չի խանգարի երեխային կենտրոնանալ միայն ուսուցման վրա: Հնարավորության դեպքում երեխայի համար մեծ էկրան ապահովենք, իրականում հեռախոսը կամ նույնիսկ պլանշետը ցանկալի չեն: Ապահովենք բավարար հեռավորություն: Աչքերից մինչ էկրան հեռավորությունը պետք է լինի կես մետրից մինչև 60 սմ, հայացքը ուղղված էկրանի կենտրոնին, որը պետք է տեղակայված լինի աչքերի հորիզոնական գծից ներքև մոտ 20-30 աստիճան անկյունով:

Կորոնավիրուսի բռնկման պատճառով ստեղծված լարված իրավիճակը և անընդհատ համացանցում լինելը նպաստավոր պայմաններ են ստեղծում համացանցի վտանգների ծավալների մեծացման համար: Այդ վտանգներից շատ տարածված է կիբերբուլլինգը:

Համացանցի տարածված վտանգից՝ կիբերբուլլինգից, խուսափելու համար պետք է կարողանանք այն կանխելով կամ հաղթահարելով համացանցը դարձնենք ավելի ապահով: Քննարկենք այդ երևույթն ու դրա հետևանքները:

Կիբերբուլլինգ

Ի՞նչ է կիբերբուլլինգը: Կիբերբուլլինգը նույն բուլլինգն է (հոգեբանական տեռոր, ճնշում), որն հանդիպում է համացանցում՝ Այսինքն իրականացվում է թվային տեխնոլոգիաների միջոցով: Քանի որ Կիբերբուլլինգն առցանց է կատարվում, այն ավելի լայն մասսայի ուշադրություն է գրավում: Կիբերբուլլինգի հանդիպում ենք սոցիալական մեդիայի և ցանկացած տիպի հաղորդագրություններ ուղարկելու հարթակներում (օր՝ Ինստագրամում, Facebookում, Վայբերում) և իհարկե առցանց խաղերում:

Ի՞նչպես տարբերել բուլլինգը կատակից

Մովորաբար ընկերները միասին կատակներ են անում, սակայն երբեմն այն կարող է վերածվել վիրավորանքի կամ ծաղրի: Եթե զգում ես, որ միասին ծիծաղելու փոխարեն բոլորը քեզ են ծաղրում և դա շարունակվում է նույնիսկ քո զգուշացնելուց

հետո, նշանակում է դա արդեն բուլլինգ է: Եվ քանի, որ դա քեզ վիրավորում, անհանգստացնում կամ տխրեցնում է, ուրեմն պետք է դիմել օգնության և պայքարել դրա դեմ:

Կիրերբուլլինգի ազդեցությունը

Չնայած կիրերբուլլինգն առցանց է կատարվում, բայց հնարավոր է, որ մարդն իրեն անապահով զգա ամենուրեք, նույնիսկ՝ տանը: Այն կարող է երկարաժամկետ *Հոգեբանական, Ֆիզիկական* և *Հուզական* ազդեցություն ունենալ տուժողի վրա՝ առաջացնելով ընկճվածություն, վախ, նյարդային դրսևորումներ, ամոթի զգացում և այլն:

Ի՞նչ անել կիրերբուլլինգի դեպքում

Ինչո՞ւ է կարևոր դրա մասին խոսելը

Բոլորն էլ կարող են ենթարկվել կիրերբուլլինգի: Այս պարագայում եթե մենք՝ մեծերս, քիչ թե շատ կարող ենք կողմնորոշվել, Երեխաների դեպքում իրավիճակն առավել վտանգավոր է: Ուստի շատ Կարևոր է, երեխաների հետ խոսել համացանցի մասին: նրանք պետք է տեղեկացված լինեն, համացանցի աշխատանքից, ինչից պետք է զգուշանալ և ինչպես իրենց գրագետ դրսևորեն օնլայն տիրույթում: Անպայման անհրաժեշտ է ստեղծել փոխվստահության միջավայր, որպեսզի կիրերբուլլինգի դեպքում երեխայի առաջին քայլը լինի ծնողին պատմելը: Սակայն ծնողների հետ խոսելը ամեն երեխայի համար հեշտ չէ, հետևաբար նա կարող է դիմել մտերիմ և վստահելի անձանց՝ ընտանիքի այլ անդամներին, դպրոցի հոգեբանին, դասղեկին կամ սիրելի ուսուցչին: Ի դեպ շատ ուսումնական հաստատություններում լուրջ են վերաբերվում կիրերբուլլինգին և պայքարում են դրա դեմ: Քանի որ կիրերբուլլինգի ենթարկված երեխան կարող է ավելի խոցելի ու ընկճված լինել, հետևաբար պետք է ավելի ուշադիր, բարի և հոգատար լինենք նրա հանդեպ: Երեխան պետք է զգա մեր օժանդակությունն ու պատրաստակամությունը: պետք է հասնենք նրան, որ երեխան վստահ լինի ու հավատա, որ պատրաստ ենք օգնել իրեն և միասին ելք գտնենք ստեղծված իրավիճակից:

Երեխան պետք է գիտակցի, որ ամենակարևորն իր անվտանգությունն է և անհրաժեշտության դեպքում իրավիճակն ավելի ճիշտ նկարագրելու համար պետք է նկարի (screenshot) անի և պահի համապատասխան հաղորդագրություններն ու գրառումները: Սակայն կիրառելի են անպարտելի չէ, և հետևելով խորհուրդներին կարելի է խոսափել կանխել այն:

Կիրառելիության կանխում

Քանի որ կիրառելի են կարող է բացասական հետևանքներ թողնել ու վնասել մարդկանց: Դրա համար շատ կարևոր է՝ պայքարել կիրառելի են դեմ:

Եթե մարդը կիրառելի են գոհ է դարձել, հնարավոր է ջնջի որոշ հավելվածներ կամ ցանկանա որոշ ժամանակ չօգտվել համացանցից: Եվ քանի որ համացանցից հրաժարվելը ցանկալի լուծում չէ, բացի դրանից բուլլինգի ենթարկողին դա կարող է վատ ազդակ հանդիսանալ, ուստի անհրաժեշտ է անպայման անրադառնալ օնլայն տիրույթների կարգավորումներին: Դրանք արհեստական բանականության շնորհիվ գտում և թաքցնում են բուլլինգ պարունակող մեկնաբանությունները: Այսինքն տեխնոլոգիայի միջոցով կանխարգելել կիրառելի են ենթարկվելու հնարավոր դեպքերը և բուլլինգ պարունակող բովանդակությամբ հաղորդագրություններ տեսնելը: Հատկապես երեխաների համար, պետք է փոխել բոլոր այն հարթակների կարգավորումները, որոնցից երեխաները հաճախ օգտվում են: Ծրագրերի միջոցով վերահսկել երեխայի թվային հետքը՝ այցելած կայքերը, ստացած հաղորդագրությունները և այլն:

Շատ կարևոր է նաև համացանցում պաշտպանել երեխաների անձնական տվյալները:

Ինչպե՞ս դա անել

Քանի դեռ երեխաները գտնվում են մտավոր զարգացման և իրավագիտակցության ձևավորման ճանապարհին, կարող են լիովին չգիտակցել իրենց անձնական տվյալների կարևորությունը կամ գիտակցեն, սակայն չկարողանան պատշաճ կերպով պաշտպանել դրանք: Ուստի մենք պետք է զգուշացնենք երեխաներին, որ առցանց խաղեր խաղալիս **ոչ մի դեպքում չորամաղրել իրենց անձնական տվյալները՝** անուն, ազգանուն, տան ու դպրոցի հասցե, հեռախոսի

համար: Սոցիալական ցանցերում գրանցվելիս ևս չհրապարակել անձնական տվյալներ՝ քանի որ իսկական ընկերները, միեւնույն է, գիտեն, թե որտեղ է ապրում կամ սովորում, բայց հաքերները կամ այլ մարդիկ կարող են դա օգտագործել երեխային վնասելու համար:

Ապահով համացանց

Շատ կարևոր է տիրապետել նաև սոցիալական մեդիայի գաղտնիության կանոններին և իմանալ այն կարևոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են անձնական տվյալները պահպանելու համար

- Settings-ի միջոցով կարող ենք կարգավորել՝ ով կարող է մեզ նամակներ գրել, տեսնել մեր գրառումները ով՝ ոչ:
- կարող ենք ընտրել, ումից մեկնաբանություններ ստանալ, ումից՝ ոչ:
- Կարող ենք որոշ մարդկանցից թաքցնել (hide) անել մեր գրառումները կամ ուղղակի ջնջել դրանք մեր էջից
- Կարող ենք report-ի միջոցով սոցիալական մեդիայի ադմինիստրացիային տեղեկացնել վիրավորանք պարունակող մեկնաբանությունների, վարքի, գրառումների և անցանկալի նկարների մասին:
- կարող ենք չեղարկել (unfriend) ընկերության հայտը, ինչպես նաև արգելափակել (block) անել տվյալ օգտատիրոջը, որպեսզի նա այլևս չկարողանա հետևել մեզ և տեսնել մեր էջը: Երբեմն սոցիալական մեդիաներում որևէ մարդուն արգելափակելիս այդ անձը չի տեղեկանում դրա մասին:

Սրանք անհրաժեշտ միջոցներ են, համացանցն առավել ապահով դարձնելու համար: Կարևոր է նաև

Հակավիրուսային ծրագրեր

Հակավիրուսային ծրագրերը բացի նրանից, որ կպաշտպանեն համակարգչային վիրուսներից, կնվազեցնեն նաև համացանցի վտանգավոր ազդեցությունը: Ուստի անհրաժեշտ է տեղադրել **Հակավիրուսային ծրագրեր:**

Գաղտնաբառ

Եւ նորից գաղտնաբառերի մասին

Պետք է կիրառել ուժեղ գաղտնաբառ: Գաղտնաբառը պետք է լինի ապահով, այսինքն՝ դժվար կռահելի: Ապահով գաղտնաբառը պետք է բաղկացած լինի պատահականորեն ընտրված տարբեր սիմվոլներից, թվերից, մեծատառերից և իհարկե պետք է գաղտնի պահվի: Յուրաքանչյուր հավելվածի համար Պետք է ունենալ առանձին գաղտնաբառ, որպեսզի եթե կոտրեն մեկը, շղթայաբար չգաղտնագերծվի օր՝ էլ.փոստը, կամ անձնական տվյալներ պարունակող մյուս էջերը: Գաղտնաբառը չի կարելի տրամադրել ոչ մեկին:

Պետք է օգտվել միայն անվտանգ կայքերից

Քանի որ երեխաներին անընդհատ կոչ ենք անում դիմել մեզ իրենց մտահոգող հարցերի դեպքում, ուստի մենք էլ պետք հարստացնենք մեր գիտելիքները ապահով համացանցի վերաբերյալ: Դա կարելի անել երեխաների հետ՝ համացանցում ինչ որ նյութ փնտրելու կամ տեղադրելու միջոցով: Այդ ընթացքում դիմեք նրան որպես զիտակի, խորհուրդ հարցրեք և ստեղծելով փոխվստահության միջավայր անձնական օրինակով ուղղորդեք նրան վստահելի և ապահով տիրույթներ: Երբեք մի բացեք դուրս լողացող (pop-up) պատուհանները: Փակեք դրանք սեղմելով վերին աջ անկյունի կարմիր խաչի վրա: Ինչ-որ կայք էջ մուտք գործելիս, պետք է համոզվել, որ այն անվտանգ է: Ուշադրություն պետք է դարձնել հասցեի առաջին հատվածին: Եթե այն սկսվում է **https:// կամ shttp://**, ապա դրանք վստահելի են:

Հասկապես դպրոցահասակ երեխաներին պետք է բացատրել համացանցից նյութերի անփույթ ներբեռնման ռիսկերը:

Համացանցից որևէ նյութ ներբեռնելուց առաջ կարևոր է համեմատել դրա անհրաժեշտությունն ու անվտանգությունը: Այն ամենը ինչ տեղադրում ենք համացանցում, մնում է հավերժ: Կարևոր է, թե ո՞ւմ հետ ենք կիսում, ո՞վ կարող է տեսնել այն, քանի որ համացանցից երբեք չի ջնջվում: Նույնիսկ եթե օգտատերը ջնջում է իր ներբեռնած նյութը, միևնույն է, այն կարող է պահպանվել այլ օգտատերերի մոտ և տարածվել: Այսպիսով, ներբեռնելուց առաջ ցանկալի է հիշել

ժողովրդական ասացվածքը, որը տվյալ պարագայում կլինի՝ **յոթ անգամ մտածիր հետո ներբեռնիր:**

Հանրային վայրերում համացանցին միանալուց առաջ, **պետք է ուշադիր լինել հավելվածի հարցադրումներին**, քանի որ մեր թույլտվությամբ կարող են հասանելի լինեն մեր նկարները, հաղորդագրությունները, գեոլոկացիան եւ այլն:

Պետք է զգոն մոտենալ այս հարցերին՝ արդյո՞ք պետք է տալ այսպիսի տեղեկատվություն:

Երբեմն ուղղակի կարելի է մերժել ու միանալ, իսկ եթե հնարավոր չէ մերժել, ուրեմն պետք է ընտրել ապահովություն, թե՞ համացանց:

Քննատադաբար պետք է մոտենալ համացանցի տեղեկատվությանը

Այո պետք է քննատադաբար մոտենալ համացանցում տեղադրված նյութերին, Չպատասխանել սոցիալական ցանցերում հայտնված անհայտ թեստերի հարցերին: Հաճախ սոցիալական ցանցերում հայտնվում են առաջարկություններ՝ թեստի միջոցով բացահայտել, օրինակ, ո՞վ ես եղել նախկին կյանքում, ինչպիսի՞ տուն կունենաս կամ ո՞ր երկիր կճանապարհողես 2020թ-ին: Այդ թեստերը անվտանգ չեն, քանի որ թեստի հարցերին պատասխանելուց հետո արդյունքն հայտնում են միայն այն ժամանակ, երբ համաձայնում ես նրանց թույլ տալ կարդալ հաղորդագրություններդ կամ մուտք դեպի նկարներդ եւ այլն: Այսպիսով հասանելի ես դարձնում քո անձնական տվյալները, որոնք հափշտակելով կարող են քո նկարներով կեղծ էջեր բացել, քո անունից նամակներ ուղարկել ընկերներիդ կամ այլ մարդկանց:

Երբեք չբացել և չտարածել անհայտ հասցեներից կամ մարդկանցից ստացած հաղորդագրություններ:

Նույնիսկ եթե այն ասում է, որ փոխանցես 20 ընկերներիդ, հաշիվդ կլիցքավորվի 10000 դրամով կամ կլինես հաջողակ: Ցավոք, նույնիսկ մեծերն են հավատում ու գայթակղվում նման առաջարկով: Պետք է հիշել, որ բացելով այդ էջերը, կարող ենք վարակել համակարգիչը, քանի որ դրանք նպատակ ունեն գողանալ անձնական տվյալները՝ համակարգչային վիրուսներ տարածելով:

Պետք է զգույշ լինել, որ լինես ապահով:

Հայաստանը 2008թ-ից միացել է ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ համաեվրոպական նախաձեռնությանը, որը հնարավորություն է տալիս նպաստել համացանցի եւ այլ տեղեկատվական տեխնոլոգիաների ապահով եւ արդյունավետ օգտագործմանը, մարդկանց ուշադրությունը հրավիրել համացանցի ապահով օգտագործման հարցերին, պայքարել ապօրինի, վնասակար և ոչ պատշաճ բովանդակության դեմ, պաշտպանել վիրտուալ ցանցերում առաջացող հնարավոր ռիսկերից, ինչն իր հերթին կնպաստի մեր կյանքի մասը կազմող վիրտուալ կյանքը որակապես բարելավելուն:

Կիրառարածքը անարխիստական հանգրվան է դառնում է նրանց համար, ովքեր ձգտում են վրեժ լուծել, նվաստացնել և սպառնալ. կիրառարածքները գնալով ավելի տարածված երևույթ է դառնում, հատկապես երիտասարդների միջև շփումներում:

Դեռևս 2015թ.-ին Լայնաշերտ կապի կայուն զարգացման հանձնաժողովը պարզել է, որ ամբողջ աշխարհում առցանց կարգավիճակում գտնվողների 73% ենթարկվում կամ ենթարկվել է կիրառարածքության որևէ ձևի³: 2017 թվականին Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտը գնահատել է, որ 15 տարեկանից բարձր օգտատերերի 10 տոկոսն արդեն ենթարկվել է կիրառարածքության որևէ ձևի: Այդ ժամանակից ի վեր կիրառարածքությունը կտրուկ աճել է: 2020թ. «Plan International»-ի 31 երկրների 14 000 օգտատերերի շրջանում անցկացված հարցման ժամանակ հարցվածների ավելի քան 50 տոկոսը հայտնել է, որ ենթարկվել է առցանց ոտնձգությունների կամ բռնությունների:⁴

Թեև Հայաստանում կիրառարածքության վերաբերյալ տվյալները սակավ են, սակայն ռիսկերը դեռևս բարձր են. բնակչության 83 % ամեն օր օգտվում է ինտերնետից: Հայաստանն ունի բջջային լայնաշերտ ծածկույթի բարձր մակարդակ: 2018 թվականի դրությամբ գրեթե ողջ բնակչությունն ուներ 3G ցանցի հասանելիություն: Երկրի 4G LTE ծածկույթը Անկախ Պետությունների Համագործակցության տարածաշրջանային միջին ցուցանիշից բարձր է⁵: Հայաստանում ամենաշատ օգտագործվող սոցիալական

³ TU/UNESCO ((ԱԿԻ | այ նաշերտալայ ին զարգացման հանձնաժողով 2015) Կիրառարածք ուն

⁴ (2017) Կիրառարածք ունը ստանալ իք է հարկաբա կանանց և աղջիկների համար

⁵ ITU (2018) Տեղեկատվական հասարակությունը սն հաշվետվություն 2018 – հատր 2 – Երկրի նկարագիր. Գայ աստան.

ցանցերն են ֆեյսբուքը (61%), Ինստագրամը (13%), Փինթերեստը (12%), Թվիթերը (11%), YouTube-ը (5%) և Tumblr-ը (3%)⁶:

«Safer Internet Programme» ի 2017 թվականի հետազոտությունը ցույց է տվել, որ հարցված մարդկանց 38%-ն իրենք երբևէ զբաղվել են համացանցում հալածանքներով, իսկ նրանց 40%-ն այդ գործողությունը որպես կատակ է ընդունել:

Հետապնդումների իրականացմանը մասնակցել է մոտավորապես հավասար թվով տղաներ և աղջիկներ:

Համաձայն Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (2018թ.) և ՅՈՒՆԵՄԿՕ-ի (2019թ.) հրապարակումների՝ հալածանքը (բուլլինգը) իրականություն է Հայաստանում, հատկապես դեռահասների և երիտասարդների շրջանում: 2019 թվականին ՅՈՒՆԻՍԵՖ-ի մամլո հաղորդագրությունը նախազգուշացրել է «առցանց բռնության, կիբերհարձակման և թվային ոտնձգության վտանգների մասին Հայաստանում առցանց 15-ից 24 տարեկան երիտասարդների 82% համար» և «համաձայնեցված գործողությունների կոչ է արել՝ երեխաների և երիտասարդների նկատմամբ առցանց բռնության դեպ պայքարելու և այն կանխելու համար»⁷:


Երեխաների և երիտասարդների նկատմամբ առցանց բռնության դեմ պայքարել և այն կանխելը համար անհրաժեշտ է պարբերաբար վերազինվել **կիբերհարձակումների վերաբերյալ** գիտելիքներով:

⁶ Statcounter <https://gs.statcounter.com/social-media-stats/all/armenia> (30 սեպտեմբերի 2021 դրույթ ամբ)


⁷ UNICEF (2019) Ապահով Զանցանցի օր. ՅՈՒՆԵՖ-ը կոչ է անում համակարգված գործողություներ իրականացնելու և ծնողներին համարձակելու առցանց երիտասարդների 82 տոկոսի նկատմամբ ահաբեկչության և ոտնձգության և նրանց կանխելու համար

Հետազոտության արդյունքներ

Աշակերտների իրազեկվածությունը



Աշակերտների վարքագիծը



Եզրակացություններ

Թվային հարթակները երեխաներին կրթությունը և ընկերների հետ շփումը շարունակելու, ինչպես նաև՝ խաղեր խաղալու հնարավորություն են տալիս: Սակայն առցանց գտնվելու ժամանակահատվածի ընդլայնումը մեծացնում է երեխաների անվտանգությանը, պաշտպանությանը և անձնական տվյալներին սպառնող ռիսկերը: Վերը ներկայացրած հետազոտության արդյունքները փաստում են, որ անհրաժեշտ է **պաշտպանել երեխաներին համացանցում**, նրանց հետ խոսել համացանցի մասին: Երեխաները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպե՞ս է համացանցը աշխատում, ինչից պետք է զգուշանան և ինչպես պետք է իրենց պահեն համացանցում:

Քանի որ երեխաներին անընդհատ կոչ ենք անում դիմել իրենց մտահոգող հարցերի դեպքում, ուրեմն պետք է **հասանելի լինել**, զինված և պատրաստված անհրաժեշտ է **լսել երեխաներին**: Ժամանակն է բարձրացնել նաև ծնողների մեղիագրագիտության մակարդակը, որպեսզի ճիշտ խորհուրդներ տան երեխաներին: Նրանք կարող են դիմել համակարգչային ծանոթ մասնագետների, որոնք կհուշեն, թե ինչպես պաշտպանել երեխային ոչ հարիր բովանդակությունից, կիրբերուլլինգից, անձնական տվյալների կորուստից և այլն: Եթե անգամ չգիտեն այս կամ այն հարցի պատասխանը, օգտվե՛ն առիթից և երեխայի հետ միասին գտնեն պատասխանը: Այսպիսով, երեխան կտեսնի, թե խնդրին առերեսվելու դեպքում, ինչպես կարելի է փնտրել և գտնել լուծումներ՝ օգտագործելով վստահելի տիրույթներ: Սա անձնական փորձով առցանց տիրույթում երեխային ուղղորդելու շատ լավ օրինակ է: Սա նաև ծնողների համար լավ հնարավորություն է՝ կրճատելու այն անդունդը, որը մեր սերունդների միջև կա առցանց տեխնոլոգիաների ընկալման և կիրառման առումով:

Եթե որոշ ժամանակ առաջ «ապրում ենք թվային աշխարհում» պնդմանը վերապահումով էինք մոտենում, ապա այսօր, արդեն առանց չափազանցնելու, հաստատում ենք այդ պնդումը:

Առաջարկություններ

Քանի որ երեխաներին տալիս ենք համացանցից օգտվելու լայն հնարավորություններ՝ ուրեմն պարտավոր ենք ապահովել նրանց անվտանգությունը համացանցում ևս: Առաջարկում եմ կատարել այս հիմնական քայլերը:

Հենց այսօր փոխել առցանց հաթակների կարգավորումները

Պետք է թե՛ համակարգչային վարակներից պաշտպանող ծրագրեր տեղադրել համակարգչի մեջ և թե՛ փոխել բոլոր այն հաթակների կարգավորումները, որոնցից երեխաները հաճախ են օգտվում: Պետք է դա անել հենց այսօր, քանի որ հենց այսօր բոլոր երեխաները ակտիվորեն օգտվում են համացանցից: Սրա հետ մեկտեղ՝ կան մատչելի այլ ծրագրեր, որոնց շնորհիվ կարող եք վերահսկել երեխայի թվային հետքը՝ այցելած կայքերը, ստացած հաղորդագրություններ և այլն: Իհարկե, պետք է հիշել մի կարևոր բան ճիշտ չի լինի օգտագործել այս իրավիճակը երեխայի հետ փոխվստահության միջավայրը տոտալ վերահսկողության միջավայրի վերածելու համար: Ամենաճիշտն այն է, որ երեխայի հետ միասին նստեք և ավելի ապահով դարձնեք կարգավորումները՝ երեխային բացատրելով, թե ինչու է սա արվում և ինչու է կարևոր:

Համացանցում երեխաների հետ միասին որոշակի ժամանակ անցկացնել

Մասնակցե՛ք նրա գործողություններին, խոսե՛ք այս կամ այն բանի մասին, խորհուրդ հարցրեք, արձագանքեք: Փորձեք հինգ-տասը-տասնհինգ րոպե երեխայի հետ միասին նստել համակարգչի, հեռախոսի կամ պլանշետի մոտ: Այսպիսով՝ երեխայի հետ փոխվստահության հարաբերություններ կկառուցեք նաև թվային կյանքում: Սակայն հիշեք, որքան էլ որ վերահսկողությունը կարևոր է ու պետք է լինի անընդհատ, երեխաների մոտ չպետք է ստեղծվի անձնական կյանք չունենալու զգացողություն: Հակառակ դեպքում, տագնապային իրավիճակը ավելի կսրացնեք:

Երեխայի հետ միասին դիտել տեսանյութեր

Եվ հետո խնդրել երեխաներին դիտարկել իրենց սոց մեդիայի էջերը՝ գրառումներով և ամեն ինչով հանդերձ, և հասկանալ, թե ինչ տեղեկատվություն կարող է իրենց մասին քաղել երրորդ անձը՝ դիտելով իրենց էջերը: Եթե այնպիսի տեղեկատվություն է, որ դուք հանգիստ կարող եք տրամադրել ցանկացած անձի, հետևաբար ամեն ինչ լավ է: Բայց եթե կան բաներ, որ այդքան էլ հարմար չեք զգա, որ անձանոթները իմանան, ապա որոշ փոփոխություններ պետք է անեք: Հաշվի առնելով, որ այս տեղեկատվությունը հասանելի է թե՛ բարի, թե՛ չար մարդկանց, զգո՛ւ և ուշադիր եղեք էջի տեղեկատվությունը գնահատելիս: Կանխավարկածը պետք է լինի, որ այս պարագայում «թշնամիները» շատ են, այն էլ՝ թաքնված:

Հաճախ ամոթը, անօգնական լինելու զգացողությունը երեխաներին ստիպում են լռել խտրականության և բուլիինգի մասին, ուստի՝ մի՛ հետաձգեք և ձեր երեխաների հետ միասին խոսե՛ք կիբերբուլիինգի մասին, այն է՝ թվային տիրույթում տեղի ունեցող բուլիինգի մասին:

Համացանցի ընձեռած հնարավորությունները լիարժեք օգտագործելու և կիբեռհարձակումներից խուսափելու համար պետք է նվազեցնենք սպառնող ռիսկերը և համացանցը դարձնենք ավելի ապահով: Որպեսզի նվազեցնենք սպառնող ռիսկերը պետք է բարձրացնել հանրային իրազեկման մակարդակը:

Գրականության ցանկ

<https://www.unicef.org/armenia/>

<https://ampop.am/cyber-security-issues-in-armenia/>

<https://hy.wikipedia.org/wiki/Ինտերնետ-հավաճանք>

<https://www.babycef.am/hy/childcare-health/security-online-safety-tips-for-parents?term>

<http://millab.ge/ar/mil-resources/exercises/28/any/any/0/>

https://www.youtube.com/watch?time_continue=34&v=JEu1YLBkWXY&feature=emb_title

<https://www.babycef.am/hy/quiz/what-is-a-cyberbullying-and-how-to-protect-children>